

11.02.14

Հարցազրույց ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ

Եղիշե ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻ հետ

- Պարոն Արզումանյան, ԿԸՀ-ն վերջին շրջանում ակտիվացրել է աշխատանքներն ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների հետ, ավելի հաճախակի են մասնագիտական դասընթացներ կազմակերպվում. ինչո՞վ է դա պայմանավորված:

- ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընտրությունները կազմակերպող և ընտրությունների օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական մարմին է, որը նաև կազմակերպում և անցկացնում է ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ, սահմանում դասընթացներ կազմակերպելու և որակավորում շնորհելու կարգը: Այս կապակցությամբ օրենսդրության պահանջներին լիարժեք տիրապետելու, քվեարկության ընթացքում հանդիպող տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի ունակությունների կատարելագործումը, որպես ընտրական գործընթացի պատշաճ կազմակերպման և անցկացման կարևոր երաշխիք, մշտապես գտնվում է մեր առանձնահատուկ ուշադրության կենտրոնում: Ասեմ նաև, որ Ընտրական օրենսգրքի 42-րդ հոդվածի պահանջն է ընտրական հանձնաժողովներում ընդգրկվելու իրավունք տալ միայն այն քաղաքացիներին, ովքեր անցնում են մասնագիտական դասընթացներ և ստանում համապատասխան որակավորում: Ընտրական հանձնաժողովների բոլոր անդամները պետք է ունենան համապատասխան ունակություններ, փորձ և նվիրվածություն ընտրական գործընթացին հետևելու հարցում՝ ապահովելով արդարություն, անկողմնակալություն, անկախություն, թափանցիկություն և արհեստավարժություն: Մասնագիտական դասընթացների ավարտին կազմակերպվում են ստուգարքներ, որոնց արդյունքում էլ շնորհվում են որակավորման վկայականներ: 2013թ. օգոստոսին գործող կարգը տեխնիկական և կազմակերպական որոշ փոփոխություններ է կրել, որի նպատակը դասընթացների կազմակերպման պրակտիկայում հանդիպող որոշակի բացերի շտկումն ու գործող ընթացակարգերի կատարելագործումն է:

- Տարվա ընթացքում ի՞նչ հաճախականությամբ եք կազմակերպում այդ դասընթացները, և ովքե՞ր կարող են մասնակցել:

- Մեր հանրապետությունում առաջին անգամ 2010թ. համապետական ընտրությունների նախաշեմին կազմակերպվեցին նման դասընթացներ: Հետագայում դրանք պարբերական բնույթ կրեցին. տարին երկու անգամ մենք կազմակերպում ենք նման դասընթացներ: Որակավորման վկայականներ տրվում են 3 տարի ժամկետով: Դասընթացներին կարող են մասնակցել ընտրելու և ընտրական հանձնաժողովներում ընդգրկվելու իրավունք ունեցող ԼՂՀ քաղաքացիները:

Դասընթացներին չեն կարող մասնակցել ԱԺ պատգամավորները, դատավորները, նախարարները և նրանց տեղակալները, շրջվարչակազմերի ղեկավարները, քաղաքապետներն ու համայնքների ղեկավարները, ազգային անվտանգության,

նստիկանության և պաշտպանության գերատեսչությունների, դատախազության, բանկային համակարգի աշխատակիցները, ԼՂՀ քրեական օրենսգրքի որոշ հոդվածներով դատվածություն ունեցող անձինք: Տարածքային ընտրական հանձնաժողովների առաջարկությունները հաշվի առնելով՝ 2013թ. հաստատվել էր դասընթացներ կազմակերպելու ժամանակացույցը, իրականացվել ըստ գոտիների տեղաբաշխումը: Դասընթացները նախապատրաստվել և անցկացվել են հրապարակայնորեն, ընթացքը պարբերաբար լուսաբանվել է զանգվածային լրատվության միջոցներով:

- Ինչպիսի՞ն էին նախորդ տարվա ցուցանիշները:

- 2013թ. մասնագիտական դասընթացներն անց են կացվել երեք փուլով, ընդ որում՝ ընդգրկվել են հանրապետության բոլոր շրջանները: Այդ դասընթացներին մասնակցել և որակավորման վկայական են ստացել ընտրական իրավունք ունեցող 2085 քաղաքացիներ, ունկնդիրների ամենաբարձր թիվ գրանցվել է նոյեմբեր ամսում. 142 համայնքներից մասնակցել է 1233 քաղաքացի, որոնցից 562-ը (45,6%) բարձրագույն, 321-ը (26%) միջին մասնագիտական, 350-ը (28,4%) միջնակարգ կրթություն ունեն: Ըստ կուսակցական՝ պատկանելության 943 անձ (76,5%) անկուսակցական է, 177-ը (14,4%) ԱԺԿ, 76-ը (6,2%)՝ Ազատ Հայրենիք, 36-ը (2,9%), ՀՅԴ կուսակցությունների անդամներ են: Որակավորվածների 82,6%-ն աշխատում է: Մեր աշխատանքներին ավելի ակտիվ մասնակցություն են ցուցաբերում իգական սեռի ներկայացուցիչները (59,9%): Ըստ տարիքային կազմի՝ 30,2%-ը 18-35, 42,3-ը՝ 36-50 և 27,6%-ը 50-ից բարձր տարիք ունեցող քաղաքացիներ են: 2011-2013թթ. մասնագիտական դասընթացներին մասնակցել և որակավորման վկայականներ են ստացել 2872 քաղաքացիներ (413-ը՝ 2011թ., 374-ը՝ 2012թ. և 2085-ը՝ 2013թ.), ինչը թույլ է տալիս, որպեսզի բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովները հետագայում ձևավորվեն ընտրական օրենսգրքի դրույթներին համապատասխան:

- Դասընթացներին նոր մասնակիցներ հաճա՞խ են գրանցվում:

- Ընդհանրապես, ԼՂՀ- ում կազմակերպված բոլոր ընտրություններն էլ աչքի են ընկել իրենց ժողովրդավարությամբ, թափանցիկությամբ և կազմակերպվածության բարձր մակարդակով, սա ամենաշատը պայմանավորված է մեր քաղաքացիների օրինապաշտ և օրինապահ բնավորությամբ: Ողջունելի և ուրախալի է, որ ընտրական գործընթացներում ոչ միայն ընտրողներն են ակտիվ, այլև դրանք տեղերում կազմակերպել ցանկացողները, ովքեր քաջ գիտակցում են, որ ժողովրդավարական ընտրությունների անցկացումը կախված է ոչ միայն մանրակրկիտ և հիմնավոր ընտրական օրենսգրքից, այլև ընտրական օրենսդրության բարեխիղճ իրագործումից: Նախորդ տարում 351 ունկնդիրներ դասընթացներին մասնակցում էին առաջին անգամ, դա թույլ է տալիս ենթադրել, որ ընտրությունների կազմակերպման և անցկացման ժամանակ տեղամասային ընտրական հանձնաժողովների գրեթե մեկ երրորդը կձևավորվի նոր անդամներից:

Տարեցտարի մեր կողմից կազմակերպվող դասընթացները ևս բովանդակային առումով կատարելագործվում են: Յուրաքանչյուր դասընթացից հետո կոնկրետ վերլուծվում են դրանց կազմակերպման և անցկացման ժամանակ նկատված թերություններն ու բացթողումները՝ առաջիկայում դրանք բացառելու նպատակով: Պետք է ասել, որ նախորդ տարում

դասընթացները դասախոսական կազմի կողմից առավելապես բանավեճերի, ընտրական օրենսգրքի առանձին երկիմաստություն պարունակող հոդվածների, պրակտիկայում հաճախակի հանդիպող դրվագների վերլուծությամբ են ընթացել, որին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել դասընթացների մասնակիցները:

- Նախկինում խոսվել է ԼՂՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին:

- Մեր հանրապետությունում գործող Ընտրական օրենսգիրքը հիմնականում համապատասխանում է միջազգային չափորոշիչներին և ընտրական գործընթացի գրեթե բոլոր իրավիճակների համար լուծումներ է պարունակում, սակայն կան երկիմաստության հիմքեր տվող որոշ կետեր: Այս ուղղությամբ մշակվում է ԼՂՀ ընտրական օրենսգրքում լրացում-փոփոխությունների շուրջ առաջարկությունների փաթեթ, որն ավարտուն տեսքի բերելուց հետո կներկայացվի հանրային քննարկման:

Նունե ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ